

Այս թաղը Պօլսոյ Բարիզն է – եթէ Բարիզն իրեն նուաստութիւն չհամարիր իւր անունն Բերայի վրայ տեսնելը:

Անուանի են հասարակաց պարտեզներն, որք դրախտ ալ կկոչուին եւ ուր կգտնուի *ծառ գիտութեան բարւոյ եւ չարի. բարւոյ ծառը* դեռ պտուղներով բեռնաւորուած է, իսկ *չարի ծառին* վրայ ոչ թէ պտուղ, այլ տերեւ անգամ չես կարող գտնել:

Փողոցները բաւական լայն են. միայն թէ առաւօտներն այդ փողոցներէ անցնելու չգար, վասնզի ամեն առաւօտ կ'աւլըուին եւ փոշեղէն մառախուղ մը չորս կողմը կ'պատէ:

Ունի գեղեցիկ խօսարաններ, որոնց մէջ երգեցիկ աղջիկներ մինչեւ առաւօտ եղանակով կը խօսին այլեւայլ նիւթերու վրայ: Ունի նաեւ համալսարաններ, որոնց մէջ աղէկ թուղթ խաղալու, վարպետութեամբ դիմացինդ կողոպտելու գիտութիւնը կ'աւանդուի դիւրուսոյց եղանակով:

Տուներուն գրեթէ երեք մասը քարուկիր է: Այս տուները շատ քաջ են. կրակէ բնաւ չեն վախնար, բայց կայրին:

Ձեռագործներն մեծ կատարելութեան հասած են. գեղեցիկ սեռէն անոնք, որ գող կ'ըլլային, եթէ արական սեռին վերաբերէին՝ հոս խանութներ բացած՝ մեր ազգին աղջիկներուն եւ տիկիներուն գրպաններէն ամեն օր, ամեն ժամ, ամեն վայրկեան, ամեն րոպէ բազում դրամ կքաշեն:

Փոքրիկ գլխարկի մը համար երկու ոսկի կ'ուզեն, իսկ գայն շտկելու համար, այսինքն վրան ծաղիկ մը կ'ապելու համար՝ մէկ ոսկի կ'պահանջեն: Բարիզէն եկած գաղափարին համեմատ շապիկներ կկարեն, գոր առաջին անգամ կոճկելուդ կոճակները կբրդին, եթէ քիչ մը երկար շունչ առնես՝ կարերը կքակուին. այսպէս հասկցիր բոլոր հագուստներուն համար: Այս տեղէն շապիկ կամ զգեստ ծախու առնողն ուշադրութեամբ եւ որոշեալ չափով շունչ առնելու է:

Նշանաւոր է իւր լիճն, որ ձմեռ ստեն կգոյանայ Թագսիմէն մինչեւ Ղալաթիոյ Սէրայը: Ընկերութիւն մը այդ լճին վրայ նաւակներ բանեցնելու արտօնութիւն ինդրեց, բայց չկրցաւ ստանալ:

Եթէ արտօնութիւն տրուած ըլլար՝ այդ մարդը մեծ գումարներ կշահէր. սակայն այս արտօնութեան հակառակեցան կիներէն ոմանք, որք բարեպատեհ առիթ կհամարէին սոյն լիճն՝ իրենց խոշոր սրունքներն արգոյ հասարակութեան ցոյց տալու համար. վասնզի երբ այդ լճակէն անցնէին՝ մինչեւ ծունկերը վեր կ'առնէին իրենց շրջազգեստն: Գալով այն